ԱԶԳԱՅԻՆ

Հեռագիր Ամենապատիւ Տեղակալ Ատենապետի Սինոդի Սրբոյ Էջմիածնի Սրբազան Երեմիա Եպիսկոպոսի առ Տէր Նախարար Ներքին Գործոց ի պատճառս մահուան Մեծի Իշխանի Նիկոլայ Նիկոլայեվիչի Երիցու։

«Միաբանական եղբայրութիւն Սրբոյ Էջմիածնի «ի խոր խոցեալ ընդ մահ 'Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ «ՌԱՐՁՐՈՒԹԵՐՆ Մեծի Իշխանի 'Նիկոլայ 'Նիկո- «լայեվիչի Երիցու՝ համայն ուխտիւ այսօր առաջի «Միածնաէջ Սեղանոյն կատարելով գՀոգեհանգիստ «վասն ի Տէր հանգուցելոյն և թախծութեամբ վերին- «ծայելով առ Ամենակալն զՋերմագին մաղթանս վասն «հանգստեան հոգւոյ Մեծի Իշխանին, յարգանօք «խնդրէ ի Ռարձր Գերագանցութենէ Ձերմէ տարա- «ծել առ ուսս Գահոյից սիրեցեալ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅ- «ՍՐ զխորին ցաւակցութեան զգացմունս հաւա- «տարմագոյն հպատակի՝ Հայ հոգևորականութեան։ «Յաւիտենական յիշատակ Պանծալի Մեծ Իշխա- «նին»։

Ի պատասխանի այսր 'Նորին Սրբազնութիւնն ընկալաւ ի Գառավարչապետէ Կովկասու ի 17 Մայիսի ամսոյ թ. 4487 զայս գրութիւն. «Պատիւ ունիմ «ծանուցանել Ձերդ Ռարձր Սրբազնութեան, թէ «որպէս երևի ի գրութենէ 'Նախարարի 'Ներքին Գոր- «ծոց՝ Թագաւոր Կայսրն ըստ ամենահպատակ զե- «կուցման Ստատս Սեկրետար Դուրնովի զՀեռագիր «Ձերդ Ռարձր Սրբազնութեան, որով արտայայտեալ «էիք զՀաւատարմագոյն զգացմունս խորին ցաւակ- «ցութեան հոգևորականաց Հայոց ի մահ Մեծի «Իշխանի 'Նիկոլայ 'Նիկոլայեվիչի Երիցու՝ ամենա- «ողորմածաբար հաճեցաւ հրամայել գոհանալ զՀոգևո- «րականութենէդ զայդմանէ»։